

պատմէ իր վրայ պատահած : () ր մը անտառի մը մէջ խոտ քաղելու ելած ըլլալով՝ վեց գայլու ձագ կը գտնէ հազիւ դեռ ութ օրուան . անոնցմէ մէկը իրեն հետ կ'առնու տուն կը բերէ , և կը սկըսի ամենայն խնամքով սնուցանել . նախ միայն կաթ կը կերցընէ , ետքը կաթ և հաց , վերջն ալ ապուր . գայլը կը սկըսի ուժոգնալ , և փայփայանք ու մեծ սէր տեսնելով տիրոջը կողմանէ՝ ձայնին մտիկ կ'ընէ , կը լզէ զինքը ու բաւական հեռաւորութեամբ նետուած բան մը բերանը կ'առնու կը բերէ : Սալմոն տը Պոմար վառեկի փորոտիք կերցընել կը փորձէ և կը տեսնէ որ ուրիշ ամէն տուած բաներէն աւելի ախորժով կ'ուտէ : Երկրորդ զիշերը Սալմոն երազին մէջ ինքզինքը գայլերու ձեռք մատնուած տեսնելով՝ սաստիկ ցաւէ մը կ'արթննայ . և ինչ տեսնէ , իր սնուցած գայլը ազգըը խածեր ու արիւնը կը ծծէր . շուտ մը կը ցատկէ ու մէկէն սնէն ալ կը վազնտէ . և վերջը կը լսէ որ անոր գազանութենէն խալտելու համար ստիպուեր են սպաննել զինքը :

Գայլուն բնութեանը վրայ գիտնալիք ուրիշ մանրամասն տեղեկութիւնները օրագրիս առջի տարիներէն մէկուն մէջ տուած ըլլալով , չենք ուզեր հոս անոնց կրկնութիւնն ընել . այլ որովհետեւ գայլն իր նենգաւոր և անգութ բնաւորութեանն համար ամենայն առակախօսաց ճոխ նիւթ մը եղած է , ընթերցողաց զուարճութեանն համար կ'ուզենք հոս մեր ազգային առակախօսներէն մէյմէկ ընտիր առակներ դնել , որոնք նաև ճաշակ մը թերևս կրնան ըլլալ երկու հեղինակաց ոճոյն զանազանութեանը :

Աղուռու և Գայլն :

Աղուռն ետես զպանիրն յորոգայթն , երթայ առ գայլն և ասէ . ո՛վ եղբայր , էկ առ զպանիրն և կեր . զի ուրբաթ է , և ես 'ի պաք եմ : Եւ եկն գայլն , և ջանայր առնուլ զպանիրն . և անկաւ

յորոգայթն , և թռեաւ պանիրն . և էաւ աղուռն և սկսաւ ուտել : Բայէ գայլն . վայ եղբայր՝ մի ուտեր . ուրբաթ է օրս՝ որ չբարկանայ քեզ Բստուած : Եւ ասէ աղուռն ցգայլն , թէ ուրբաթն այդ է՝ որ 'ի պարանոցդ անկաւ . և այդ է բարկութիւնն Բստուծոյ : Եւ սկսաւ գայլն ցանձել յայտ կոյս և յայն կոյս : Եւ աղուռն ասէ . ընդ նոյնդ և ես ցանձեցի երբեմն՝ և ոչ զերծայ : Եւ ասէ գայլն . վայ է ինձ՝ զի նեղիմ չարաչար : Եւ ասէ աղուռն . ո՛վ եղբայր , դու չես վայ՝ մինչև գայ տէր որոգայթիդ :

Յուցանէ առակս , թէ զգաստ լեր որ չխաբիս 'ի նենգաւոր մարդկանէ , և յայնժամ վայ տաս անձին քո :

ՎԱՐԿԱՆ Ա. ԺԷ .

Երկրորդ աղուռն զգայլ կուրացեալ , և եմուտ նմա առաջնորդ վարձուց աղագաւ . և 'ի միումաւուր գայթապղեցոյց 'ի ջուր յակամայ . և նա ոչ հաւատայր , այլ սպասէր վրէժ առնուլ . և երկուցեալ աղուռնուն կամէր փախչել , և ոչ կարէր՝ զի ըմբռնեալ ունէր . և ասէ . Սաղիւ զատիկ է , տարայց զքեզ յեկեղեցին՝ զի կերիցես մատաղ : Եւ ուրախ եղեալ գայլուն , և գնացին 'ի վաղուն . և տարեալ զնա՝ արկ շանց . և ասէ գայլն . Եւ յէ մատաղն ո՛չ չար սպասաւոր : Եւ նա ասէ . այդ է , զի այդպիսի չար կուրի , այդ՝ և ոչ այլ ինչ վայել է .

Իմանալի է զառակս , զի զըջացեալ նենգագործք և առաջնորդէն կուրաց . և թէ չարաբարոյք հրապուրեն զնոսա , յառաջինն դառնան նենգութիւն :

ՄԻԻԹԱՐ ԳՈՇ Ա. ԶԸ :

Սառոյց :

Վճերու ջրոց վերին կարգերը բարեխառնութե մեծամեծ փոփոխութիւններ կը կրեն . ամէնքը գիտեն որ ձմեռը կրնան պնդանալ ու սառիլ , ու ա-

մատր 20 և երբեմն 25⁰ բարեխառնու-
թեանց կը հասնին : Բայց ինչ որ մա-
կերևութիւն վրայ կը տեսնուի , խորա-
գոյն կարգերուն մէջ նոյնպէս չէ . և հե-
ղանիւթոց այս զանգուածներուն վրայ
Չերմութիւնը այնպիսի կերպով մը կը
բաժնուի՝ որ հաստատուն մարմնոց պատ-
ճառներէն ու օրէնքներէն բոլորովին
կը տարբերի . և այս բանիս նկատմամբ
շատ կարևոր է այլ և այլ փորձեր ընել :
Ըս մեծ խնդրոց վրայ առաջին գիտողն
ու ճառողն եղաւ Տը-Սոսիւր բնագե-
տը , որ մեծաւ մասամբ հելուետիոյ լծե-
րը չըջագայելով՝ անոնց մակերևութիւն
և զանազան խորութեանց բարեխառ-
նութիւնները քննեց իմացաւ , և հաս-
տատեց այս երևելի հաւաստիքն որ լը-
ճերու բարեխառնութիւնը նաև շատ
խորերը գրեթէ 5 աստիճան է : Ինչուան
այն ատեն չէին գիտեր որ ջուրը մինչև
մէկ չափ մը խտութեան կրնայ հաս-
նիլ¹ . բայց հետագայ ըսելիքնիս լաւ
կը բացատրէ առաջինը :

Տարւոյն տաք եղանակին մէջ երկու
պատճառաւ լճերու ջրոց վերագոյն կար-
գերուն բարեխառնութիւնը կը բար-
ձրանայ . առաջինն է օդը՝ որ շոշափելու-
վը կ'ազդէ , և երկրորդն՝ արեգակնային
Չերմութիւնը որ աւելի կամ նուազ
խորութեամբ կը թափանցէ : Ըս ջե-
ռուցեալ կարգերը բիւր կերպով պէաց
ծածանմամբը իրարու հետ կը խառ-
նուին , բայց առանց խորն իյնալու ,
վասն զի իրենց տեսակարար թեթևու-
թիւնը զիրենք վեր կը բռնէ , և դար-
ձեալ՝ վասն զի որ և իցէ սաստիկ մրկա-
լից ալեկոծութիւն մը քիչ մը խորու-
թենէ վար ամենեւին չիմացուիր :

Ըսպէս նաև ամառը և ինչուան
աշնան վերջերը սրջափ խորն իջնենք ,

1 Ջուրն 4 աստիճան և 5 տասնորոգ բարեխառ-
նութեամբ իր ծայրագոյն խորութեանը կը հասնի . այս-
ինքն թէ այն ժամանակն աւելի ծանր է քան թէ
4 աստիճան կամ 10 աստիճան բարեխառնութիւն ,
և աւելի ծանր նաև քան զսառն : Ըսն ընդայ-
նուամ որ կ'առնու չորս աստիճանէն վար արտու-
ղութիւն մըն է հեղանիւթոց պատմութեանը մէջ ,
որոնք կը քաշուին գրեթէ ամէնքն ալ համեմատա-
բար բարեխառնութեան իջնելովն :

բարեխառնութիւնը պէտք է այնչափ
նուազի , և ասիկայ Սոսիւրի փորձերէն
ալ յայտնի է , որ յետոյ նաև Լապէշ
գիտնականն առանձին խնամքով հաս-
տատեց :

Յուրտ եղանակի մէջ ջրոց վերագոյն
կարգը երկու պատճառաւ կրնայ պա-
ղիլ . մէյմը ցուրտ օդոյն շոշափմամբ ,
և երկրորդ ճառագայթարձակմամբ և
մասնաւորապէս գիշերային ճառագայթ-
արձակմամբ :

Ըս կարգը պաղելով կը կծկի , խտու-
թիւնը կ'աճի ու քիչ մը խորունկն իջ-
նելով իրմէ ստորին Չերմագոյն կարգին
մէջ կը խառնուի . իրեն վար իջնելէն
վերջը խիցոյն ուրիշ մը իր տեղը կը փո-
խանակէ , այն ալ կը պաղի ու նոյնպէս
վար կ'իջնէ . ուրիշ մը կը փոխանակէ ,
ու այն ալ նոյն փոփոխութիւնները կը
կրէ և այսպէս հետզհետէ . և աս ան-
դադար ելող իջնող հոսանքներով մա-
կերևութիւն բոլոր վերին կարգերը կը
պաղին : Բայց պէտք է գիտնալ որ այս-
պէս միայն ջրոյն երեսի Չերմութիւնը
կը կորսուի : Եթէ ջուրը ծայրագոյն խը-
տութիւն մը չունենար , յայտնի է որ
բոլոր ձմեռուան ցուրտ եղանակին մէջ
պէտք էր բարեխառնութիւնն ըստ խո-
րութեան նուազէր , վասն զի Չերմագոյն
կարգերը միանգամայն թեթևագոյն ըլ-
լալով քան զայլս , հաւասարակշռութե-
օրէնքը պահելու համար հարկ կ'ըլ-
լար որ բարձրագոյններն ըլլային : Ըս-
պէս նաև մակերևութիւն բարեխառ-
նութիւնը , երբ բոլոր զանգուածը զրոյց
ըլլար՝ ան ատեն ինքն ալ զրոյի պիտի
հասնէր , և հետևաբար բոլոր լիճք միանա-
գամայն պիտի սառէր մինչև ՚ի խորս :
Բայց ծայրագոյն խտութեան պատճա-
ռաւ բոլորովին տարբեր երևոյթ մը կը
տեսնուի : Սակերևութիւն կարգերը
ծայրագոյն բարեխառնութեան հաս-
նելուն պէս խորը կ'իյնան . այլք կը
յաջորդեն անոնց ու իրենք ալ նոյնպէս
վար կ'իյնան , ինչուան որ զանգուածը
բոլոր իր թանձրութեամբը այս սահ-
ման սեպուած բարեխառնութեան հաս-
նի : Եթե արեւը թէ ձմեռուան ցըլը .

տերն ընդ երկար տեւեն, որով հաւասարապէս բաշխուի ջերմութիւնն ու խտութիւնը. ցուրտը շարունակելով, և միշտ մակերևութին վրայ, վերին կարգն ալ չկրնար խորն իյնալ. վասն զի որչափ որ ցրտանայ՝ միանգամայն այնչափ աւելի կը թեթևնայ. ուրեմն բարեխառնութեան նուազելը կրնայ շարունակուիլ իրեն համար և երկայնիլ անսահմանաբար, վասն զի ինքն ալ անսահմանաբար թեթևագոյն կը մնայ:

Եթէ փոխադրութիւն չըլլար, որ թէ պէտ միշտ ամենասովոր է՝ ի հեղանիութս, անշարժ ու խողազ զանգուածին այս առաջին կարգը պէտք էր որ նախ սառէր՝ առանց ներքնագոյն կարգաց բարեխառնութիւնը նուազելու:

Ի այց որովհետև, ինչպէս յայտնի է, առաւել կամ նուազ սաստկութեամբ, և հետևաբար առաւել կամ նուազ խոր շարժմունք միշտ կ'ըլլայ, ոչ միայն առաջին կարգը կը պողի ծայրագունէն վար, այլ բոլոր կարգաց թանձրութիւնը՝ որ անդադար տակնուվրայ կ'ըլլայ արեաց ծածանմամբ, և պաղման բոլոր աս միջոցին ներքին կարգերը ծայրագոյն խտութե հաստատուն բարեխառնութեանը մէջ կը մնան ինչուան շատ խորերը: Երկրորդ, նոյն եղանակին մէջ, բարեխառնութիւնը կ'աճի խորութեան հետ մինչև առաջին կարգը որ 4⁰ է, և անկէ վար բարեխառնութիւնն հաստատուն կ'ըլլայ: Չմեռուան խտանչութեան մէջ շատ փորձեր եղած չեն, բայց ամենայնիւ ըսածնիս կը հաստատուի:

Նշաւաստիկ աս է պատճառը որ խոր լճերը մակերևութին վրայէն կը սկսին սառիլ, և խիստ ծանր ընթացքով չափաւոր խորութեան մը կը հասնի սառուցումը:

Նոյն սկզբամբ կը տեսնենք դարձեալ որ խոր ու հանդարտ ջրերը սառելու համար խտաշունչ ու երկարատև ցրտեր պէտք են, վասն զի այն ամէն կարգերն որ տաք եղանակին մէջ ջերմացան, պէտք է որ մէկիկ մէկիկ կարենան մակերևութին վրան ելլել զիրենք իրենց

ծայրագոյն բարեխառնութենէն աւելի վեր պահող ջերմութիւննին կորսնցընելու համար, և եթէ աս կարգերը 100 ու ինչուան 200 մէրը թանձրութիւն ունենան՝ յայտնի է որ իրենց, մի և նոյն հանգամանաց մէջ, աւելի երկար ժամանակ պէտք է հետզհետէ մակերևութին երեսն ելլելու, և իրենց բարեխառնութեան սաստկութիւնը չափաւորելու համար, քան եթէ 8 ու ինչուան 10 մէրը միայն թանձրութիւն ունենային: Եւստի եղբրքը, լայնանիստ ծանծաղուտներու վրայ և այլ ամէն սակաւսոր տեղուանք սառի ամենաթանձր գորգեր կը ձևանան. ընդհակառակն ուր որ շատ խոր է, մակերևոյթն ազատ կը մնայ սառելէ ու բարեխառնութիւնը վեր կ'ըլլայ զրոյէն:

Ի այց հոս խնդիր մը ընդ առաջ կ'ելլէ զորն որ պէտք է լուծել, և որուն վրայ մինչև ցայսօր եղած հաւաստիքներն անստոյգ են: Ինչդիրն այս է. գիտնալ թէ ինչ խորութեամբ կրնան ազդել ամառնային տաքերը, () որ օրինակ, եթէ ինչուան 100 մէրը խորութեամբ միայն կ'ազդեն, ի կամ 600 մէրը խորութեամբ լիճ մը 100 մէրը խոր լճէ մը աւելի երկար ժամանակի մէջ չսառիր. վասն զի առաջնայն մէջ 100 մէրէն վար եղող կարգերը բոլոր տարւոյն մէջ կայուն բարեխառնութեան ծայրագոյն աստիճանին մէջ մնալով, յայտնի է որ չեղածի պէս են, և կրնանք զանոնք վերի զանգուածէն բաժանեալ սեպել՝ առանց վերին կարգերուն երևոյթները շփոթելու:

Նոյնպէս կարևոր է ջրոյն մակերևութին ունեցած բարեխառնութեանը վրայ փորձ ընել սառելու ժամանակ. վասն զի ամենայնիւ յայտնի կը կարծուի թէ այս բարեխառնութիւնս կրնայ զրոյէն ալ վար իջնել առանց սառուցման ներգործութեանն, եթէ ըլլայ մասնականց անդադար շարժմամբ այս բանիս ընդգիմանալովն, և եթէ ուրիշ միջամուտ պատճառներէ:

Եթէ լճի մը նախ քան զսառնուլը բարեխառնութիւն հարկադրեցաւ վայր-

կեան մը 4⁰ ըլլալ իր խորութեան մէջ, դիւրին է տեսնելն որ հալելէն ու լուծուելէն ետեւ ալ նոյն երեւոյթը պէտք է որ առաջ գայ, նախ քան մակերեւութային կարգաց ծայրագունէն աւելի ջեռնուլը: Այս երկու հաւասարակշռութեան վիճակաց մէջ միանգամայն կ'ենթադրուին որ ջերմանալու և ցրտանալու յանկարծական պատճառներ չըլլան, որով կարենան կանոնաւորեալ եղանակաւ հոսանքներն իջնել ու ելլել: Իսկ եթէ ընդհակառակն այս պատճառներն յանկարծական կերպով ազդեն, զոր օրինակ՝ եթէ աչնան վերջերն յանկարծական երկար ցուրտ մը սկսի, գեկտեմբերէն ետեւ, յայտնի է թէ ջրոց մակերեւոյթը կրնայ սառիլ, երբ չափաւոր խորութեամբ բարեխառնութիւնը դեռ ծայրագունէն աւելի բարձր կ'ըլլայ:

Ղուակներու մէջ ջերմութեան բաշխումը տարբեր օրինօք կը կատարուի, ջրային մասնրկանց տեղափոխութեան շարժումնր պատճառաւ. ուսկից առաջ կուգայ անգագար խառնուրդ մը վերին և ներքին կարգաց, որ կը նայի բոլոր զանգուածին մէջ մի և նոյն բարեխառնութիւնն հաստատելու. բայց որովհետեւ աս շարժումն այլ և այլ է մակերեւութին և յատակին կարգացը վրայ, մէջտեղեացն ու ափանցը վրայ, ուստի այսպիսի հանգամանօք խել մը դիպուածական երեւոյթներ կրնան հանդիպիլ, որոնց մէջ միայն սառելու վերաբերեալ երեւոյթներն աւելի խնամքով քննուած են: Այսպնի փորձերով ստուգուած է նաև որ զանազան դէպքերու մէջ սառոյցը մակերեւութէն կը սկսի. իսկ ընդհակառակն երբեմն ալ խորէն:

Այբ առուակները սառեր կը բերեն հետերնին, ընդհանրապէս խօսելով, բոլոր աս սառերը մէկմէկու զարնուելով կըր կամանկիւնաւոր ձևեր կը ստանան, առաջ մակերեւութին վրայ ձևացած կ'ըլլան. ոմանք ալ եզերքներէն բաժնուած կրնան ըլլալ. ոմանք ալ իսկզբան ուրիշ բան չէին բայց եթէ փոքրիկ ալեծուփ մասնիկներ որ հետզհետէ ջրոյն վրայ լողալով տարածոցնին աճեցաւ:

Ղաւջին սառոյցներուն ձևանալը տարակոյս չվերցրներ, վասն զի կը տեսնուի որ ափունքը սառուցի թիթեղով մը ծածկուած է, զոր անգագար ալիքները կը զարնեն ու կը ջախջախեն. հոն նախ կը սկսի սառոյցը ձևանալ, վասն զի սովորաբար ջրոյն խորութիւնը աւելի նուազ է, և միշտ այնպիսի երկիր մը կը շօշափէ որ անգագար կը պաղի օդէն և ճառագայթարձակմամբ: Այս երկու պատճառաւ սառոյցն հոն կը պաղի և ափանց նման ցուրտ մարմին մը կը դանայ, և ինչ որ իրեն մօտենայ կրնայ սառեցընել: Իսկ նոյն զանգուածէն բեկեալ ստուար կամ անպգալի մասերը կը սկսին իրենց տեսակարար թեթևութեամբ ջրոյն վրայ լողալ. ջրէն աւելի կը պաղին, և ափանց վրայ ինկող կաթիլները մէկէն կը սառին, վասն զի հոն կը ցրտանան ու անշարժ կը մնան:

Ջրոյն մակերեւութին վրայ ծովեզերքէն և այլ ամենայն հաստատուն մարմիններէ հեռու սառեր ձևանալուն վրայ բնագէտներէն ոմանք տարակոյս հանեցին. և իրաւցընէ դժուար է աս բանիս ուղղակի փորձը տալ, վասն զի ափունքէն ներս տեղուանքը թեպէտ սառի կտորուանք ալ գտնուին, կամ նաև նոր ձևանալ սկսած սառեր, միշտ կրնայ ենթադրուիլ որ եզերքէն եկած ըլլան, և ալիքներուն զարնելովն ափունքէն բաժնուած. բայց սակայն պէտք է հաւանիլ որ ջրոյն ազատ մակերեւոյթը կրնայ անսահմանաբար զրոյէն վար ցրտանալ, և այսպէս վերջապէս հանդերձ շարժմամբ կրնայ սառեր ծնուցանել որ հետզհետէ կը մեծնան օդին շօշափմամբ և ճառագայթարձակմամբ առաւել ևս պաղելով:

Այրկար ժամանակ վէճի տակ ինկաւ նաև ջրոյն խորը սառոյց ձևանալը, բայց քաջահամուտ անձինք քննելով ուղղակի փորձերը տեսան, և հիմա կը մնայ առանց կարելիութիւնը ժխտելու աս բանիս պատճառը բացատրել: Չուրը գետերէն ու առուակներէն շարժելով կըրնայ անտարակոյս շատ աստիճան զրոյէն վար իջնալ առանց սառելու. և ուր որ

չատ խոր չէ՝ ջրային կարգերուն բոլոր
 թանձրութիւնը կրնայ մասնակցիլ բա-
 րեխաունութեան այս իջնելուն . վեր-
 ջապէս , յատակին հաստատուն մարմին-
 ներն ալ կրնան մասնակցիլ անդադար
 ջուրը շոշափելով . բայց յատակին մօտ
 շարժմունքը նուազ երազ է՝ քան ինչ
 որ մակերևութին վրայ : Նատակին ան-
 հաւասարութիւնը շատ մը խղիկներու
 բազմութիւն կը ձևացնեն , ուր որ ջու-
 րը հազիւ թէ քիչ մը կը շարժի . և ինչ-
 պէս որ կը կարծուի հոն սառոյց կը կա-
 պէ , և նոյն իսկ մակերևութէն աւելի
 շուտով : Արիշ պատճառներ ալ կան
 թերևս որ աս երևութիս կ'օգնեն . բայց
 պազեալ հաստատուն մակերևութից
 վրայ տեսնուածն այնպէս չէ ինչպէս որ
 տեսնք կը կարծեն . վասն զի Փարէն-
 հայդի փորձովն , յորում ջուրը 10 կամ
 12⁰ զրոյէն վար կ'իջնայ առանց սառե-
 լու , հեղանիւթն իր անօթին պաղած
 կողերը կը շոշափէ , և շոշափման աս-
 կէտերուն վրայ աւելի չսառիր՝ քան այն
 կէտերուն վրայ ուր մակերևութն ա-
 զատ է :

Իտերն ու առուակները բոլոր ի-
 րենց լայնութեամբը սառելու համար
 ամենասաստիկ և երկարատե ցուրտ մը
 պէտք է , բայց աս երևութիս ալ ըստ
 բարձրութեան , ըստ երազութեան և
 ըստ խորութեան ջուրը կը փոխուի :

Արբ առուակ մը կը սկսի սառիլ , զին-
 քը պատող սառուցի մաշկը առջի վայր-
 կեաններուն շուտ մը աւելի կը թան-
 ձրանայ . բայց յետոյ ցուրտը հետզհե-
 տէ աւելի դանդաղ կը թափանցէ սա-
 րուցին անկատար հազորդականութեա-
 նը պատճառաւ : Կ'երևայ թէ գիշե-
 րային ճառագայթարձակումը մեծ ազ-
 դեցութիւն ունի աս երևութիս վրայ .
 վասն զի երբեմն շատ մը որիշ որիշ կար-
 դեր կը տեսնուին որ յաջորդաբար ձևա-
 ցած են մէկմէկէ դէպ 'ի վար : () որ օ-
 րինակ , 1821^ն ձմեռը , 15 քթաչափ
 թանձրութեամբ Լ'մերիկոյ լճից մէջ
 ձևացած սառուցին վրայ ինչուան 21
 որիշ կարգեր համրուեցան . դէպ 'ի վեր
 կարգերը 12 ու 18 գծերուն մէջ կը

տարբերէին . վարէն դէպ 'ի մակերե-
 ւոյթ միայն 3^ն ինչուան 6 գիծ էին ,
 բայց նաև յայտնապէս իմացուեցաւ որ
 ցուրտը միշտ հետզհետէ սասակացեր
 էր :

Սառը կրնայ ամէն ուրիշ մարմնոց
 պէս ջերմութեամբ ծաւալիլ և ցրտու-
 թեամբ քաշուիլ . աս պատճառաւ յա-
 ճախ անհամար ձեղքուածներ կը պա-
 տահին , որ երբեմն ինչուան թնդանօ-
 թի մը ահեղաձայն դղրդիւնէն աւելի
 մեծագոյ կը շառաչեն :

Արբ սառերը լուծուելնէն առաջ չեն
 բեկանիր , կրնան շատ անգամ ահագին
 ճախորդութիւններ պատճառել . աս
 վնասներուս առջևն առնելու համար
 շատ հնարքներ մտածուած են , որոնց
 մէջ ամենէն աւելի օգտակարն է սա-
 րուցին մէջ՝ տեղ տեղ իրարմէ հեռու
 պզտի բումբեր դնել ու բարնկցրնել ,
 որոնք ճայթելով անթիւ պատարուածք-
 ներ կը գործեն առանց ամենևին վնաս
 մը պատճառելու :

Մակրասկար արևային դրոշքեան :

Ս'եր դրութեան աստեղաց մէջ ա-
 ռաջին տեղին ունի արևը . որ անոնց
 կեդրոն կեցած՝ իր չորս դին կը դառ-
 նան գրեթէ բոլորչի շրջաններով այս
 ամէն մոլորակներն , որոնցմէ ոմանք վրա-
 նին կը տանին մէկ կամ շատ արբա-
 նեակներ :

Արևն այնչափ մեծամարմին է , որ
 ութ խոշոր մոլորակներն , անոնց քսա-
 նուերկու արբանեակներն , Արևակին
 երեք մանեակներն , մինչև հիմա գրտ-
 նուած վաթսունուերկու մանր մոլորակ-
 ներն , և բոլոր այն տիեզերականնիւթն՝
 որով լեցուած են ներքնամոլորակային
 միջոցները , միանգամայն առած՝ արե-
 ւուն տարածոցին հազիւ երեքհարիւ-
 րորորդ մասին կը հաւասարին . իսկ այս
 մոլորակներն իրենց արբանեակներովն
 արևուն ութհարիւրերորդ մասն հազիւ
 թէ կը կշռեն :